## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
### փորձագետ նշանակելու մասին

**16-ը հունիսի, 2017թ.** **ք.Երևան**

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Հ.Ա.Հովհաննիսյան քննարկելով վարույթիս թիվ 62213017 քրեական գործի նյութերը,

### Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյա դատարանում ՀՀ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ 325-րդ հոդվածի 2-րդ մասով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով և 325-րդ հոդվածի 2- մասով քննվող թիվ ԳԴ/0012/01/16 քրեական գործով 2017 թվականի մայիսի 11- կայացած դատական նիստի ընթացքում տուժող Համբարձում Հարությունյա միջնորդության հիման վրա, վերջինիս մասնակցությամբ հետազոտվել ավազակային հարձակմամբ վերջինիս պատկանող վաճառարկ հափշտակված, նույն գործով նախաքննության ընթացքում իրենից ապացո ճանաչված ոսկյա զարդերն ու դրանց վերաբերյալ փորձաքննությո եզրակացությունը:

Դատական նիստի ընթացքում տուժող Համբարձում Հարությունյա նախազգուշացված նախազգուշացված լինելով սուտ մատնություն կատարել համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին, հայտարարե որ դատարանի կողմից հետազոտված թվով 193 հատ ոսկյա զարդերից միայն 44 են պատկանում իրեն, իսկ մնացած զարդերը, որոնք ոսկյա չեն՝ արծաթյա են կ բիժուտերիա, իրեն չեն պատկանում:

Դատական նիստի ընթացքում պարզվել է նաև, որ նախաքննությ ընթացքում փորձաքննությանը ներկայացված են եղել 203 ոսկյա զարդեր, մինչ դատական նիստի ընթացքում հետազոտված փաթեթներում փաստացի եղել միայն 193-ը:

Փաստի առթիվ 2017 թվականի մայիսի 25-ին ՀՀ հատուկ քննչակ ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ հարուցվել է թիվ 62213017 քրեական գործը:

2017 թվականի հունիսի 1-ին նշանակվել է դատամետաղագիտակ դատապրանքագիտական և դատագեմոլոգիական համալիր փորձաքննությո որի կատարումը հանձնարարվել է ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուր պետական ոչ առևտրային կազմակերպության փորձագետներին:

ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում «թանկարժեք կիսաթանկարժեք քարերի, միներալների, հանքային ապարների հետազոտությու ենթատեսակով համապատասխան փորձագետի բացակայության հանգամանք ելնելով՝ փորձագետ Մ.Աբիկյանը միջնորդել է փորձագետ ճանաչել

բնագավառում շուրջ 30 տարվա փորձ, և վարպետ Արտակ Կայայի Մովսեսյանը, ունենալով շուրջ 20 տարվա մասնագիտական փորձ, կարող են աջակցել նշանակված փորձաքննության իրականացմանը:

Վարույթն իրականացնող մարմնին ներկայացվել են Արտակ Մովսեսյանի և Կարինե Առաքելյանի հատուկ որակավորումը հաստատող փաստաթղթերը, որոնք հաստատում են, որ վերջիններս տիրապետում են գեմոլոգիական բնագավառի բավարար հատուկ գիտելիքների:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 55-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետով, 85-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով.

## ՈՐՈՇԵՑԻ՝

Վարույթիս թիվ 62213017 քրեական գործով փորձաքննություն կատարելու համար փորձագետ նշանակել «Շողակն» ՓԲԸ լաբորատորիայի վարիչ, գնահատող Կարինե Հրանտի Առաքելյանին և վարպետ Արտակ Կայայի Մովսեսյանին, նրանց բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված փորձագետի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, եզրակացություն տալուց հրաժարվելու, առանց քննիչի թույլտվության նախնական քննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ, 342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀԿԳ ԱՎԱԳ ՔՆՆԻՉ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ